Սիպիլ

Կրիան ու բադերը

(Հին առակ)

Թեթևսոլիկ կրիա մը կար,
Որ իր ծածկեն ձանձրացած,
Ուզեց երթալ տեսնել աշխարհ,
Անցնիլ լեռներ բարձր ու ցած:
Այս մեծ խորհուրդն հայտնեց երկու բադերու,
Որոնք գինքը մինչև Փարիզ տանելու
Սիրով եղան հանձնառու:
Ըսին. «Ըզքեզ կը տանիք Սեն գետին մերձ
Մինչև Էյֆել երկնաբերձ.
Երթաս տեսնես նոր-նոր ազգեր, նոր բարքեր,
Կյանքի պերճանքն ու փառքեր:
Ու ճոխանա միտքդ, ըլլաս մեծ հանճար
Ուսանելով ինչ է դըդումն ու բանճար:
Այսպես եղան Պյուֆոն, Լիննե մեծ գիտուն,
Այսպես եղավ քաջն Ոդիսևս դյուցազուն»:
Հավանեցավ իսկույն կրիան,
Եվ թըռչուններն ալ՝ արագ
Այդ լուրջ գործին գըլուխն անցան,

Դարբնեցին ձող մը բարակ,
Զոր իր բերնին մեջ դընելով մեղմաբար,
«Աղեկ մը խա՛ծ, ըսին իրեն,
«Զըլլա բերնեդ ձըգես վար»:
Հետո, ձողին երկու ծայրեն
Երկու բաղեր բըռնեցին,
Եվ օդին մեջ բարձրանալով անդադար,

Փոքրիկ հավերն առանձին
Անցան ծովերն ու անտառ:
Ամեն կողմե ով որ զանոնք կը տեսներ,
Մեծ զարմանքով կը պոռար .
«Կրիաներու դշխոն երկինքն էր ելեր»:
«Այո՛, դշխո եմ, ի՞նչ գիտցաք,
Գոչեց կրիան մեծափառ,
Ամպերուն մեջ անհոգ արձակ
Կը ճամբորդեմ օդապար»:
Աղեկ կ՚ըլլար, եթե հանդարտ ու անբան,
Անցներ երթար իր ճամբան՝
Չի անխորհուրդ հեք կրիան՝
Երբոր թուլցուց իր ակռան,
Ձողը փախավ բերնեն, և ինք ինկավ վար,
Փըշրվեցավ գրլտորելոց քարե քար:

Արծաթ կ՚ըսեն թեև խոսքին,
Լըռությունն է սակայն ոսկին:
Ով որ կ՚ըլլա անհամբեր,
Ով որ լեզուն չի կապեր,
Գըլխուն կուգա շատ փորձանք,
Այս առակեն հասկըցանք:

1903